ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտի 2014թ. թիվ 28 - Ա

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04.11.2010թ. թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված <Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման> կարգի 6-րդ կետով

ո ր ո շ ու մ եմ.

1. 2014թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված Տավուշի մարզի մարզային նշանակության ավտոճանապարհների փետրվարի 25 – մարտի 31 ձմեռային պահպանման աշխատանքների կատարման ժամկետում իրականացնել նաև նույն նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներ և նշված ժամկետը սահմանել՝ ընթացիկ ամառային պահպանման աշխատանքների կատարման ժամկետ /<գարուն-ամառ-աշուն>/:
2.Ապահովել վերը նշված ժամկետում կատարված աշխատանքների ընդունման գործընթացը:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ Ա.Սարգսյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

11 մարտի 2014թ.
ք. Իջևան